



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

1996թ. Հայաստանի Հանրապետությունում կազմավորվեց տեղական ինքնակառավարման համակարգը, ընտրվեցին համայնքների ղեկավարներ եւ ավագանու անդամներ:

1998թ. ստեղծվեց «Երեսանի ավագանիներ» հասարակական կազմակերպությունը, որը հետագայում վերանվանվեց «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» կազմակերպության:

Ըստ կանոնադրության կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի հանրապետության ցանկացած քաղաքացի, որը գոնե մեկ անգամ ընտրվել է Հայաստանի Հանրապետության համայնքներից որեւէ մեկի ավագանու անդամ, ընդունում է կազմակերպության կանոնադրությունը, նրա նպատակները եւ խնդիրները, ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

Ներկայումս կազմակերպության մեջ ընդգրկված են Երեսանի եւ Հայաստանի բոլոր մարզերի տարբեր համայնքների նախքին եւ գործող ավագանու անդամներ:

2004 թ. մայիսից կազմակերպությունը հանդիսանում է «Միավորված քաղաքներ եւ տեղական իշխանություններ» միջազգային կազմակերպության հիմնադիր անդամ: Հայաստանի ավագանիների ասոցիացիայի ներկայացուցիչները ընդգրկված են այդ կազմակերպության համաշխարհային խորհրդի, նրա գործադիր կոմիտեի, ինչպես նաեւ Եվրասիական բաժանմունքի խորհրդի եւ վերստուգիչ հանձնաժողովի կազմում:

Կազմակերպության նպատակներն են՝

- Աջակցել Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանն ու կատարելագործմանը, նպաստել Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը, քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության կայացմանը:
- Նպաստել ՀՀ համայնքների ավագանիների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, մեծացնել ավագանու դերը հասարակության մեջ:

Մեր խնդիրներն են՝

- Տեղական ինքնակառավարման մարմին-ների գործունեությանն առնչվող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի փոփոխության առաջարկների ներկայացում՝ օրենսդիր և գործադիր մարմինների հետ համագործակցության միջոցով:
- Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիների համագործակցության ապահովում, ծանոթացում միմյանց գործունեության հետ, փորձի փոխանակում:
- Ավագանու իրազեկության բարձրացման նպատակով սեմինարների, գիտաժողովների կազմակերպում:
- Ուսուցման կազմակերպման միջոցներով բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների զարգացմանը ուղղված փորձի փոխանակման օժանդակում, աջակցում համատիրությունների կայացմանը:

Գործունեությունը՝

- Մասնակցում ենք ՀՀ նախագահին առընթեր տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի աշխատանքներին:
- Համագործակցում ենք հայաստանյան, Հայաստանում գործող միջազգային եւ արտասահմանյան կազմակերպությունների հետ:
- Հրատարակում ենք տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները, օրենքները եւ ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաեւ պետական կարեւորագույն հարցերը

լուսաբանող «Ավագանի +» պաշտոնաթերթը, որը անվճար տարածվում է տեղական ինքնակառավարման եւ պետական կառավարման մարմինների, գործընկեր կազմակերպությունների շրջանում :

- Հրատարակվել է «Բազմաբնակարան շենքեր. իրավունքներ եւ պարտականություններ» գրքույկը՝ ՈՒԻԲԲԻ-ի ինստիտուտի եւ Համատիրության սեփականատերերի ազգային ասոցիացիայի հետ համատեղ:
- ՀՀ մարզերում եւ Երեւանում անցկացվել են ուսուցողական դասընթացներ ավագանիների, համատիրությունների ղեկավար աշխատակազմի համար՝ տեղական ինքնակառավարման սկզբունքների, տեղական բյուջեների ձևավորման և ֆինանսական կառավարման, համատիրությունների զարգացման թեմաներով:
- Իրագործվել է «Շահառուների մասնակցությունը տեղական ինքնակառավարման օրենսդրության ընդունմանը» ծրագիրը, նկարահանվել է «Հանուն բնակչության բարեկեցության» ֆիլմը:
- Կազմակերպվել են համերգ փառատոներ համայնքների գեղարվեստական լավագույն խմբերի, անվանի երգիչ-երգչուհիների մասնակցությամբ:

Նախատեսում ենք՝

- Նպաստել տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերող օրենսդրության բարելավմանը:
- Շարունակել տեղական ինքնակառավարման համակարգի խնդիրներին նվիրված ուսուցողական դասընթացների անցկացումը:
- Ընդլայնել տարածաշրջանային եւ միջազգային համագործակցության շրջանակները, ներգրավելով նաեւ Հարավային Կովկասի երկրները:
- Բնակչությանը ներգրավել ներհամայնքային խնդիրների քննարկմանն ու որոշումների կայացմանը:
- Նպաստել բնակչության սոցիալական հիմնախնդիրների բացահայտմանն ու լուծմանը:
- Աջակցել համայնքներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:
- Աջակցել մշակութային և սպորտային միջոցառումների անցկացմանը, երիտասարդության խնդիրների լուծմանը:

Մեր կազմակերպությունը պատրաստ է համագործակցել

- ✓ հասարակության բոլոր հատվածների,
- ✓ օրենսդիր և գործադիր իշխանությունների,

հայաստանյան և օտարերկրյա բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

*Համագործակցության,
ինչպես նաև կազմակերպության գործունեության մասին այլ տեղեկություններ ստանալու
համար դիմել՝*

375010 Հայաստան, Երևան

Տիգրան Մեծի 4

հեռ.(+374 10) 587741

Fax.(+374 10) 567741

E-mail: avagani@dolphin.am